## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Մայիսի 9-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում, տեղի ունեցավ տոնական միջոցառում՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 73-րդ տարեդարձին եւ Շուշիի ազատագրման 26-ամյակին:*

Միջոցառմանը ելույթ ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Ցուցադրվեցին Հայրենական մեծ պատերազմին եւ Շուշիի ազատագրմանը նվիրված փաստավավերագրական ֆիլմեր, հայրենասիրական երգերի կատարումներով հանդես եկան «Հայարտուն» կենտրոնի սաները:

Հավաքվածներին դիմեցին նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Սամվել Ռամազյանը, ազատամարտիկներ՝ Ստանիսլավ Մանուկյանը եւ Արթուր Բեգլարյանը, լեգենդար հրամանատար Արկադի Տեր-Թադեւոսյանի դուստր՝ Լարիսա Դունամալյանը:

Մայիսի 9-ին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի առթիվ, Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներն այցելեցին նաեւ Թբիլիսիում բնակվող վետերաններ՝ 100-ամյա Խաժակ Եփրիկյանին, 91-ամյա Սերգո Միրզոյանին եւ շնորհավորեցին նրանց՝ Հաղթանակի օրվա կապակցությամբ:

## ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

Մայիսի 9-ին, Ախալքալաքում, նշեցին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրը, հարգանքի տուրք մատուցեցին՝ զոհվածների հիշատակին եւ շնորհավորեցին վետերաններին:

Ախալքալաքի շրջանում վետերանների թիվը տարեցտարի նվազում է: Այս տարի մնացել են միայն 8 վետերան: Իրենց արժանի հաղթանակն այսօր տոնել կարողացան միայն երեք վետերան՝ Աշոտ Ալագուլյանը՝ Խանդոյից, Ղազար Խանոյանը՝ Գումբուրդոյից եւ 104-ամյա Սամսոն Հովհաննիսյանը՝ Ախալքալաքից:

Վետերաններին շնորհավորելու էին եկել Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, քաղաքապետ Յուրիկ Ունանյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ: Նրանք Խորհրդային Միության հերոս Վաչագան Վանցյանի հուշարձանին ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեցին:

Շնորհավորանքներից բացի, շրջանի վետերանները տեղական ղեկավարությունից ստացան 750-ական, իսկ Վրաստանի կառավարությունից՝ 600-ական լարի:

* * *

Մայիսի 9-ին, Նինոծմինդայում, նշվեց ֆաշիզմի դեմ տարած համայն մարդկության հաղթանակի՝ Հայրենական պատերազմի հաղթական օրվա 73-ամյակը:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սումբատ Կյուրեղյանը եւ քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը, տեղական իշխանության ներկայացուցիչների, Հայրենական պատերազմի մասնակիցների հետ ծաղիկներ խոնարհեցին Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին եւ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին:

# ԱՊՐԵԼ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՆՈՒՅՆԻՍԿ 100 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ

## ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՎԵՏԵՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*Մայիսի 5-ին Հայրենական մեծ պատերազմի վետերան Խաժակ Եփրիկյանը դարձավ 100 տարեկան:*

Ժամը երկուսն է: Քաղաքի ծայրամասային թաղամասերից մեկի բետոնե ջունգլիներն են: Արեւն իր տարերքի մեջ է, բայց չի այրում եւ ընդամենը շոյում է: Տան շուրջբոլորը համատարած կանաչ է եւ մաքուր օդ: Եղանակն ամենատրամադրողն է զբոսնելու համար: Իմ հերոսն արդեն երկու տարի չի լքում իր բնակարանը: Միայն սենյակից սենյակ է տեղաշարժվում, այն էլ՝ ձեռնափայտի օգնությամբ: Ոտքերի թուլությունը թերեւս տկարությունն է, որից բողոքում է նա՝ իր 100 տարեկան հասակում: Մնացած ամեն ինչում դարավոր կաղնու նման պինդ ու ուժեղ է: Լինում է եւ այնպես, որ կարդում է առանց ակնոցների:

Սենյակի ձախ անկյունում սեղան է, վրան սուրճ, միրգ, կոնֆետ: Իսկ աջ մասում, բազմոցին, մեծ Հայրենականի մասնակիցն է, պատկառելի վաստակով մանկավարժը եւ գրող՝ Խաժակ Բարդուղիմեոս Եփրիկյանը:

- Խաժակ անունը, ինչպես բացատրում են ինձ հարազատները, հայերեն նշանակում է «կապուտաչյա»: Նրա աչքերն իսկապես կապույտ են: Ու նաեւ՝ շատ աշխույժ եւ խորաթափանց:

Սեղանի մոտ աթոռ է, վրան զինվորական պարգեւներով ու շքանշաններով վետերանի պիջակն է:

Խաժակը ծնվել է Նինոծմինդայի շրջանի Ղաուրմա գյուղում:





Գյուղի անունը տալիս, ժպտալով ավելացնում է. «Այո, հետաքրքիր անուն ունի գյուղը: Սիրո՞ւմ եք ղաուրմա: Համով ճաշատեսակ է: Ապա շարունակում է.

- Մենք ընտանիքում վեցն էինք: Երեք աղջիկ եւ երեք տղա: Երեք եղբայրներից ես ամենակրտսերն էի: Դպրոցում լավ էի սովորում եւ սկսեցի հաճախել մանկավարժական դասընթացների: Աշխատում էի տեղի դպրոցում, դասավանդում հայոց լեզու եւ գրականություն: Խաղաղ կյանքը երջանկություն է, դա հասկանում ես, երբ սկսվում է պատերազմը: Եղբայրներս ռազմաճակատ գնացին առաջինները:

Խաժակն իր զորագնդով պատերազմեց՝ մինչեւ Վիտեբսկ: Իսկ հետո հիվանդացավ եւ հոսպիտալացվեց: Պատերազմի մնացած մասը Խաժակն անցկացրեց հայրենիքում, Քութայիսիում:

- Հրամանատար ունեինք, ոսկի մարդ էր: Կարող էր պաշտպանել եւ փրկել քեզ ցանկացած հարցում, մինչդեռ ուրիշն իր փոխարեն զինվորական տրիբունալի տակ կուղարկեր: Սիրտը փափուկ էր, վրացական էր: Ինչո՞ւ փչացնել երիտասարդի կյանքը, եթե փրկել կարող ես: Ասենք գինովցել է, մի քիչ լիցքաթափվել: Մարդիկ նման իրավիճակում հաճախ ինքնամոռացության էին դիմում...

Կյանքը հետաքրքիր դասավորվածություն ունի: Խաժակը ռազմաճակատում էր, երբ հանդիպեց իր ավագ եղբորը: Հավանաբար, սա նրա ռազմական ճանապարհի ամենապայծառ դրվագն էր: Հաստատ չի հիշում, թե խաչմերուկներից կոնկրետ որտեղ էին հանդիպել: Փոխարենը հստակ հիշում է, թե զինվորականների գնդում՝ ինչպես ծանոթ դիմագծեր նշմարեց: Մոտեցավ եղբորը, գրկախառնվեցին: Դա նրանց վերջին հանդիպումն էր: Այդ հանդիպումից քիչ անց, եղբայրն այլեւս չկար: Միջնեկ եղբայրն անհետ կորավ պատերազմի ավարտին: Ինչպես պատմում էին համագնդայինները, նրանց զորագունդն անցնում էր ինչ-որ ուկրաինական գյուղի մոտով: Եվ եղբայրը որոշեց իջնել այնտեղ, հավանաբար՝ մթերքի հետեւից: Հետ այլեւս չվերադարձավ: Ընկերներն ասում էին, որ՝ ընկավ բանդերացիների ձեռքը: Այդ օրերից ի վեր Խաժակն ընդգծված հակակրանք ունի վերջիններիս հանդեպ:

- Մենք պատերազմում էինք գերմանացիների դեմ, զոհվում էինք, իսկ դրանք աջակցում էին ֆաշիստներին,- զգացմունքներին ազատություն տալով դատապարտում է Խաժակը՝ ազգայնականներին:

- Պապ, նրանք ձեզ հակառակ էին, հակառակ էին եւ սովետական իշխանությանը: Դրա համար էլ անցան ֆաշիստների կողմը: Իսկ հետո ֆաշիստները նրանց «գցեցին», եւ նրանք հայտնվեցին շրջափակման մեջ, բոլորին դեմ դուրս եկան՝ ե՛ւ ձեզ, ե՛ւ նրանց,- միջամտում է Խաժակի թոռը:

- Մի հիշեցրու ինձ դրանց մասին,- անհանդուրժող իր խոսքն է գցում պապը:

Խաժակն իր կենսուղում շատ բան հասցրեց տեսնել: Մինչեւ մեծ Հայրենականը անցավ ֆիննականի միջով: Այնտեղ հայտնվեց՝ որպես զորակոչային: Իսկ արդեն Երկրորդ Համաշխարհայինի ժամանակ ռազմաճակատում աշխատում էր որպես կապային:

- Պատահում է՝ չես քնում չորս օր եւ այլեւս ոչինչ չես գիտակցում ու հազիվ ես պահում քեզ, մինչդեռ քեզ հարկավոր է ոտքի վրա կանգնած մնալ եւ պարտքդ մատուցել, պաշտպանել երկիրը: Իսկ գիտե՞ք, թե ինչն է առավել քան լավ բացահայտում պատերազմը: Ընկերությունը: Նրա համար չկա եւ ոչ մի փորձություն, քան պատերազմը: Երբ կիսում ես հացիդ վերջին կտորը եւ բաժանում երկու մասի, որպեսզի գոյատեւեք: Եվ համոզված ես նաեւ, որ ընկերդ՝ հանուն քեզ իր կյանքը կզոհի:

Պատերազմից հետո Խաժակը վերադարձավ եւ սկսեց աշխատել գյուղի դպրոցում: Իր 100 տարիներից 70-ը՝ Խաժակը նվիրեց երեխաների հետ աշխատանքին: Ուսուցանում էր հայոց լեզու եւ գրականություն: Հենց այդտեղից էլ բխեց մանկական եւ անչափահասների հոգեբանության այդքան լավ գիտակցումը, այն խնդիրներին՝ քաջտեղյակությունը, որոնք հուզում են նրանց:

- Նրանց պետք է ճիշտ դաստիարակել, սեր սերմանել հայրենիքի, աշխատանքի, կնոջ ու ավագների հանդեպ: Երիտասարդությունն այսօր շատ է առաջադեմ: Խոսել այն մասին, որ նրանք այսօր ավելի դաստիարակված կամ ավելի քաղաքավարի չեն, քան մենք մեր ժամանակ, ճիշտ չէ: Անշուշտ, դա այդպես չէ: Միաժամանակ նրանք շատ հարցերում մեզանից առաջ են անցել: Նրանք տիրապետում են շատ թեմաների: Այսօր կա ինտերնետ եւ երիտասարդությունն այդտեղից ինֆորմացիա է քաղում: Ինչ էլ ասեն երիտասարդության մասին, ես միշտ կանգնում եմ նրանց թիկունքում, որովհետեւ նրանք ապագայի գրավականն են, մեր ապագա կյանքը: Իսկ կյանքը ես սիրում եմ:

- Ինչի՞ մասին եք գրում Ձեր գրքերում:

- Կյանքի մասին,- խոնարհաբար պատասխանում է Խաժակը,- ընկերության, սիրո մասին, դավաճանության եւ արիության, կյանքի հանդեպ ունեցած կամքի մասին:

Խաժակի ստեղծագործությունների հերոսները, որպես կանոն, իրական կերպարներ են: Հեռու գնալ պատմվածքների հա-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

# ԱՅՍՕՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ՝ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

*Մայիսի 9-ին Վրաստանը նշեց՝ 1941-45 թվականների Երկրորդ համաշխարհային պատերազմին, ամբողջ աշխարհին սպառնացող ֆաշիզմի դեմ պայքարում, ԽՍՀՄ ժողովուրդների նվաճած Մեծ հաղթանակի 73-րդ տարելիցը:*

*Վրաստանից ռազմաճակատ մեկնած 700 000 զինվորից չվերադարձավ նույնիսկ կեսը...*

*Մեր թղթակիցը Թբիլիսիի փողոցներում հակիրճ հարցում կատարեց պարզելու՝ ինչ գիտի այսօրվա երիտասարդությունը երկրորդ համաշխարհային պատերազմի եւ1945-ի մայիսի 9-ի մասին...*

*Ահա ինչ պատասխանեցին նրանք:*

**Գոչա Կանկավա (19 տարեկան).** - Գիտեմ, որ դա Երկրորդ համաշխարհային պատերազմ է կոչվում, եւ Ռուսաստանն ու նրա կազմի մեջ մտած երկրները, որոնց շարքում՝ նաեւ իմ հայրենիքը, մասնակցեցին պատերազմին ու պարտության մատնեցին այն հրահրող ֆաշիստական Գերմանիային...

**Կարեն Համբարձումյան (30 տարեկան).** - Ես, անկեղծ ասած, այսօրվա տարեց մարդկանց շրջանում, նկատել եմ, մի տեսակ տագնապը նրա, որ այսօրվա՝ դիսկոտեկ վազող սերունդը, մեղմ ասած, չունի ո՛չ բարոյական պարտքի գիտակցում, ո՛չ հայրենիքը պաշտպանելու վճռականություն կամ՝ ինչպես ժողովուրդն է ասում՝ թասիբ... Մինչդեռ մոտ անցյալի պատմական դեպքերը՝ Վրաստանում եւ Հայաստանում՝ կարծում եմ, լավագույն ապացույցն են մե՛ր երիտասարդների հայրենասիրության ու անձնազոհության...

**Կախա Ջուրաբիշվիլի (28 տարեկան).**- Համենայնդեպս, ինձ ծանոթ ընկերներս, որոնց շրջանում շատ են նաեւ հայերը, այդ տոնը առանձնահատուկ են նշում. մենք սիրով ու հարգանքով խմում ենք նրանց հիշատակի կենացը: Մի՞թե այլ կերպ կարող է լինել՝ չէ՞ որ նրանք դեպի մահ են գնացել մե՛զ համար: Մենք գտնում ենք, որ դա սրբազան տոն է: Օգտվելով առիթից՝ տոնի առթիվ, իմ եւ ընկերներիս կողմից, շնորհավորում եմ հայ վետերաններին ու ընդհանրապես՝ «Վրաստան» թերթի ընթերցողներին:

**Հովհաննես Կոստանյան (23 տարեկան).**- Իմ պապի հայրը՝ Պողոս Կոստանյանը, կամավոր է ռազմաճակատ մեկնել: Ի դեպ, եղել է ընդամենը 17 տարեկան, գերի է ընկել, Լեհաստանի, չեմ հիշում որ քաղաքի, համակենտրոնացման ճամբարից խմբով փախել են, վերադառնալուց հետո հարկադիր աշխատել է Գռոզնի քաղաքի հանքափորերում... Մի խոսքով, երակներումս վետերանի արյուն է հոսում... Այս տոնը, կարծում եմ, հպարտությամբ է լցնում մեզ եւ միաժամանակ՝ սրբազան պարտքի գիտակցությամբ, որ հիշենք նրանց, հպարտանանք նրանց հերոսությամբ, պահպանենք ու ծաղկեցնենք նրանցից ժառանգած մեր այս չքնաղ հայրենիքը:

**Գիորգի Կացիտաձե (26 տարեկան).**- Ամեն անգամ՝ մեր պապերի թանկ գնով ձեռք բերված հաղթանակը հիշելով՝ մենք «ոչ» ենք ասում այսօրվա պատերազմներին: Մեր ընդհանուր «ոչը» միավորո՛ւմ է մեզ, լցնում՝ նո՛ր հաղթանակի հավատով: Մայիսի 9-ը բերում է մեզ այն կարեւորի գիտակցումը, թե ինչու մենք հաղթեցինք...

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱԼՅԱՆ***

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ

# ԱՊՐԵԼ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՆՈՒՅՆԻՍԿ 100 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

մար հերոս ընտրելու համար եւ տանջել երեւակայությունը, նրան բնավ հարկավոր չէ: Պատմությունները, որոնք հանձնում է թղթին, կյանքում էլ շատ են: Եվ քմահաճ օրիորդ Մոսայի վրա նա երբեք չի բողոքում: Խաժակն այս պահին էլ գրում է: Գրում է այն մասին, թե ինչպես է տղամարդը հեռանում տանից՝ փող վաստակելու նպատակով: Օտար ափերում ամուսնանում է ուրիշ կնոջ հետ: Մոռանում՝ իր կնոջ, երեխաների ու ծնողների մասին: Մինչդեռ տանը նրան սպասող եւ նյութական աջակցության հույսով ապրող ընտանիքը խրվում է պարտքերի մեջ, գնելով երեխային երաժշտական գործիք...

Սուրճն արդեն խմված էր ու կոնֆետները հատած, երբ իմ հերոսն ինձ վրա «կրակեց» անձնականի մասին հարցով.

- Իսկ կանանց մասին դուք ինձ հարցնել չե՞ք ուզում: Օրինակ, գերմանացի կանանց մասին...

Եվ, իրոք, այդքան ժամանակ ես նույնիսկ չէի ակնարկել «կարեւորի» մասին: Ճիշտ էր: Հուսալով փոքր-ինչ արդարացնել ինձ, շրջադարձեցի.

- Բայց Դուք չեք հասել մինչեւ Բեռլին, որտեղի՞ց կարող եք իմանալ գերմանացի կանանց մասին:

- Խոսքը նրանց մասին է, ում ճանաչել եմ: Գերմանացի կանանց՝ պակաս, ի դեպ, այստեղ էլ չկար: Բայց նրանք այստեղ տարիներ էր, ինչ ապրում էին եւ արդեն մերն էին: Եվ մեր ցավը նրանց սեփականն էր նաեւ: Իսկ առհասարակ, կատակը՝ մի կողմ, թե մենք պայքարում էինք ռազմաճակատում, իսկ նրանք մեզ պահում էին թիկունքից, պաշտպանում էին մեզ: Եվ, եթե ոչ՝ այդ աջակցությունը, ո՞վ գիտի, կկարողանայինք, արդյոք, ցավին դիմանալ: Քանիցս եմ ցավ ապրել, որ ողջ եմ մնացել, մինչդեռ եղբայրներս, ովքեր արդեն երեխաներ ունեին, զոհվել ու տուն չեն դարձել: Ես շատ էի մտածում այդ մասին, թե որքան անարդար է կյանքը: Չէ՞ որ նրանք պետք է երեխաներին ոտքի կանգնեցնեին: Նրանց երիտասարդ կանայք էին սպասում տանը: Բայց տուն, չգիտես ինչու, հենց ես վերադարձա,- խորասույզ հայացքով ասում է Խաժակը:

- Հայրիկ, բայց չէ՞ որ դու նրանցից փոքր էիր, նրանք ռազմաճակատ գնացին քեզանից առաջ: Դրա համար էլ նրանք արդեն երեխաներ ունեին: Դու ախր մեղավոր չես, որ ամենակրտսերն էիր,- ասում է դուստրը:

- Միեւնույն է,- ընկրկում է Խաժակը,- դա անարդար է: Թեեւ այնտեղ,- մատը վերեւ է տանում,- նրանք իրենց թվաբանությունն ունեն: Իրենք են որոշում, թե ով պետք է գնա, ով՝ մնա...

- Ահա եւ նա, բարեկազմ, կապուտաչյա,- ասում է աղջիկը՝ մատնանշելով ինձ այն լուսանկարը, ուր Խաժակը 50 տարեկան է: Նախկին կապային Խաժակը կնոջ հետ ծանոթացավ ինստիտուտում: Խաժակը ուսումնառում էր լեզու եւ գրականություն, կինը սովորում էր ֆիզիկա-մաթեմատիկայի ֆակուլտետում: Մի օր լսարան մտավ մի գեղեցկադեմ աղջիկ: Խաժակն անմիջապես ուշադրություն դարձրեց: Նրա կողքի նստարանն ազատ էր եւ աղջիկն այդտեղ էլ տեղավորվեց... Խաժակի ամուսնությունից ծնվեց որդին, ով այժմ Մոսկվայում է, եւ դուստրը: Հենց նրա եւ թոռների հետ էլ այժմ ապրում է: Կինն այլեւս երկրային կյանքով չի ապրում: Ի դեպ, դուստրը, նախկինում կենսաբանության ուսուցչուհի է: Սերունդների ահա այսպիսի իրավահաջորդություն ունեն:

- Մի գուցե Դուք երիտարդության ինչ-որ գաղտնիք ունե՞ք,- հրաժեշտի պահին հարցնում եմ ես՝ վետերան-երկարակյացին:

Խաժակը մի պահ մտածմունքի մեջ է ընկնում, հետո՝ ժպտալով պատասխանում.

- Ես չեմ ծխում, չեմ խմում, կերակրի մեջ աղ չեմ օգտագործում: Չեմ խմում սառը ջուր: Նույնիսկ երբ շատ եմ ուզում, փոխարենը՝ ուտում եմ պաղպաղակ: Այն սառն ու քաղցր է:

- Քաղցրավենիքից ընդհանրապես հրաժարվել է: Ինքն իրեն, առանց բժիշկների,- ավելացնում է դուստրը,- ախտորոշել է, որ շաքարախտ ունի: Եվ խուսափում է ցանկացած ավելորդություններից: Երբ ավելի երիտասարդ էր, զբաղվում էր սպորտով, սիրում՝ լողալ: Ոչ մի առավոտ առանց մարզանքի չէր անցնում: Յուղալի կերակուր իրեն չի թույլատրում, ինքն իրեն ինչ-որ խոտաբույսեր է պատրաստում, իսկ հացն ընդհանրապես հանել է կերակրացանկից:

- Կապրեմ եւս երկու տարի, իսկ հետո կարող եմ գնալ այս աշխարհից,- ծիծաղում է Խաժակը,- Գիտեք, ես մտածում էի, թե մարդը ձանձրանա՞լ կարող է կյանքից, չէ՞ որ հարյուրը դա քիչ չէ: Եվ սակայն, կասեմ ձեզ հետեւյալը՝ ապրել ուզում ես նույնիսկ 100 տարեկանում:

***ԵԿԱՏԵՐԻՆԱ ՄԻՔԱՐԻՉԵ***
***«Սպուտնիկ Գրուզիայի» լրագրող՝***
***հատուկ «Վրաստանի» համար***

## ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

### ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



*Հետաքրքիր է՝ մասնագիտությունները դասակարգելիս հաշվի՞ է առնվում, արդյոք, այս կամ այն մասնագիտության վտանգավորության աստիճանը: Եթե՝ այո, ապա, հետաքրքիր է, Վրաստանում ո՞ր մասնագիտություններն են համարվում ամենավտանգավորը:*

***Ն. Պետրոսյան***

***Նինոծմինդա***

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության, աշխատանքային պայմանների տեսչության դեպարտամենտը, հանրագումարելով աշխատատեղերում դժբախտ պատահարների թիվը, որի արդյունքում 2016-2017 թվականներին զոհվել կամ ֆիզիկական վնասվածքներ են ստացել աշխատողները, սահմանել է երկրում կյանքի համար վտանգավոր մասնագիտությունները:

Ամենավտանգավոր մասնագիտությունների ցուցակը, իրականացված ուսումնասիրության համաձայն, գլխավորում է շինարարության ոլորտը: Աշխատատեղերում 2017 թվականին, զոհված բանվորների թվով, այդ ոլորտին բաժին է ընկնում զոհվածների ընդհանուր թվի 52 տոկոսը: Այդ ոլորտը գլխավորում է նաեւ աշխատատեղերում ֆիզիկական վնասվածք ստացած բանվորների թվի ցուցակը. այն կազմում է ընդհանուր թվի 52,2 տոկոսը: 2016-2017 թվականներին շինարարության ոլորտում զոհվել է 13 եւ վնասվել՝ 12 մարդ:

Ցուցակում երկրորդ տեղը զբաղեցնում է լեռնարդյունաբերության եւ հանքարդյունաբերության ոլորտը: Դրան բաժին է ընկնում աշխատատեղերում ընդհանուր թվի 20 տոկոսը: 2016-2017 թվականներին այդ ոլորտում զոհվել է 5 մարդ:

Ամենավտանգավոր մասնագիտությունների ցուցակում երրորդ տեղը զբաղեցնում է վերամշակման արդյունաբերությունը: Դրան բաժին է ընկնում աշխատատեղերում զոհվածների ընդհանուր թվի 8 եւ վնասվածք ստացածների 21,7 տոկոսը: Վերոնշյալ ժամանակահատվածում այդ ոլորտի աշխատատեղերում զոհվել է 2 եւ վնասվածք ստացել 5 մարդ:

Ցուցակի չորրորդ տեղում էլեկտրաէներգիայի, բնական գազի մատուցման եւ օդորակիչների տեղադրման հետ կապված աշխատանքներն են: Այդ մասնագիտությանը բաժին է ընկնում մահացու ելքերի ընդհանուր թվի 8 տոկոսը: 2016-2017 թվականներին այդ ոլորտում վավերացվել է երկու մահացու դեպք:

Վտանգավոր մասնագիտությունների ցուցակը եզրափակում է բենզա եւ գազալցման կայանների աշխատանքը: Այդ ոլորտին բաժին է ընկնում աշխատատեղերում զոհվածների ընդհանուր թվի չորս եւ տուժվածների՝ 17,4 տոկոսը: 2016-2017 թվականներին այդ ոլորտում զոհվել է 1 եւ վնասվել՝ 4 մարդ:

ԽՈՐՀՈՒՐԴ

### ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԴՊՐՈՑԸ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանում մեկնարկել է 2018-2019 ուսումնական տարվա համար առաջին դասարանցիների գրանցումը: Բնականաբար, մանկահասակ երեխաներ ունեցող բոլոր ծնողների առջեւ ծառանում է կրթօջախի ընտրության հարցը: Ինչի՞ն տալ գերադասությունը՝ մայրենի լեզվով ուսուցմա՞նը, մայրենի եւ պետական լեզվով միաժամանակյա ուսուցմա՞նը, դպրոցի մասնագիտական կողմնորոշմա՞նը...*

Այս հարցը մտահոգում է շատ ծնողների: Մինչ պատասխան փնտրելը, ծնողն առաջին հերթին պետք է.

❒ ճանաչի իր երեխային, իմանա նրա նախասիրությունները, ճիշտ գնահատի նրա ինչպես առողջական վիճակը, այնպես էլ՝ բնավորության գծերը եւ հնարավորությունները,

❒ ինքն իրեն հարցնի՝ ի՞նչ է ուզում ինքն իր երեխայի համար եւ ինչի՞ է պատրաստ իր նպատակին հասնելու համար,

❒ ինքն իր համար պարզի՝ ո՞րն է «լավ» դպրոցն իր համար:

«Լավ» դպրոց հասկացությունը հարաբերական է, եւ յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում՝ ինչ է պետք իրեն եւ իր երեխային:

Դպրոցն ընտրելիս անհրաժեշտ է.

**1. Տեղեկություններ հավաքել դպրոցների մասին:** Պաշտոնական տեղեկատվության մեջ ոչ միշտ է արտացոլվում ոչ պետական դպրոցների մասին ինֆորմացիա: Եվ, բացի այդ, տվյալ դպրոցում աշխատող մի քանի նվիրյալ ուսուցիչների առկայությունը չի հավաստում, որ այդ դպրոցի ողջ ուսուցչական անձնակազմը նվիրյալ է, կամ՝ օլիմպիադաներում հաղթած մի քանի աշակերտների առկայությունը չի նշանակում, որ դպրոցում մշակված է այնպիսի համակարգ, որ բոլոր աշակերտները ձգտեն դեպի ուսումն ու գիտելիքը:

**2. Ուշադրություն դարձնել դպրոցի մասնագիտացմանը (ֆիզիկամաթեմատիկական, հումանիտար, երաժշտականական եւ այլն):** Յուրաքանչյուր ծնող ինքը պետք է ընտրի իր երեխայի հետաքրքրություններին համապատասխան դպրոց:

**3. Հաշվի առնել դասարանում աշակերտներ թիվը:** 35 եւ ավելի աշակերտներից բաղկացած դասարաններում դժվար է լիարժեք կազմակերպել երեխաների որակյալ ուսուցումը: Այն երեխաներին, ովքեր չեն հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություններ եւ, ինչու չէ, ունեն վարքի եւ բնավորության առանձնահատկություններ, ավելի ճիշտ է տանել այնպիսի դպրոց, որտեղ դասարանում երեխաների թիվը մինչեւ 15 է:




**4. Հետաքրքրվել ուսումնական ծրագրերի ծանրաբեռնվածությամբ:** Պետք է հաշվի առնել, որ «ուժեղ» դպրոցներում ուսումնական ծրագրերը շատ հագեցած են, եւ երեխաները, նույնիսկ տարրական դասարաններում, ստիպված են՝ տնային հանձնարարությունները կատարելու համար, ծախսել 5-6 ժամ: Ոչ բոլոր երեխաներն են ի վիճակի դիմանալ այսպիսի ծանրաբեռնվածությանը:

**5. Հաշվի առնել դպրոցի հեռավորությունը:** Ցանկալի է, որ դպրոցը մոտ լինի տանը կամ՝ հարմար լինի այնտեղ հասնելը:

**6. Ուշադրություն դարձնել դպրոցի մասնաշենքին:** Պակաս կարեւոր չէ նաեւ դպրոցի մասնաշենքը, եթե նույնիսկ այն վերջերս չի վերանորոգված, գոնե պետք է լինի մաքուր, խնամված, ունենա սպորտային դահլիճ, համակարգչային դասարան, լաբորատորիա:

**7. Հետաքրքրվել մանկավարժական անձնակազմի եւ տարրական դասարանների դասվարի մասնագիտական հմտություններով:**

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ծնող ինքն է որոշում՝ ինչն է իր համար առաջնային:

Ստորեւ ներկայացվում են այն հիմնական չափանիշները, որով կարող են առաջնորդվել ծնողները.

❒ դպրոցի մասնագիտացում,

❒ կարգապահություն,

❒ ուսման բարձր որակ,

❒ փորձառու մանկավարժական անձնակազմ,

❒ տարրական դասարանների դասվարի մասնագիտական հմտություններ,

❒ տեխնիկական հագեցվածություն,

❒ արտադպրոցական աշխատանքների կազմակերպում,

❒ ճանապարհը,

❒ մաքուր եւ խնամված մասնաշենք:

Հաջողություն ենք մաղթում բոլոր ծնողներին այս շատ պատասխանատու եւ ոչ այնքան հեշտ որոշում կայացնելիս:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ 16-ՐԴ ՎԱՐՉԱՊԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նրա առաջադրմանն ու թեկնածությունը սատարելու մասին հայտարարել էին «Ելք» խմբակցությունը՝ 9 պատգամավոր, «Ծառուկյան» խմբակցությունը՝ 31 պատգամավոր եւ ՀՅԴ-ը՝ 6 պատգամավոր:

Խորհրդարանական մեծամասնություն (58 պատգամավոր) ունեցող Հայաստանի հանրապետական կուսակցությունը, վարչապետի ընտրության առաջին փուլից հետո, հայտարարել էր, որ վարչապետի ընտրության երկրորդ փուլում կպաշտպանի պատգամավորների մեկ երրորդի (35 պատգամավոր) կողմից առաջադրված թեկնածուին:

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանում ապրիլի 17-ից հանրահավաքներ էին անցկացվում Ազգային ժողովի պատգամավոր, «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանին Հայաստանի վարչապետ ընտրելու պահանջով: Մայիսի 1-ին Ազգային ժողովում Հայաստանի վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի ընտրության առաջին փորձը տապալվեց: Այն ժամանակ անհրաժեշտ 53-ի դիմաց, Նիկոլ Փաշինյանն արժանացավ 45 պատգամավորի աջակցությանը: 56 պատգամավոր դեմ քվեարկեց:*

### *ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ.*

*Ծնվել է 1975թ., ՀՀ Իջեւան քաղաքում: 1991-95թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում: Զբաղվել է ակտիվ լրագրությամբ: Աշխատել է երեւանյան թերթերում, եղել է «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր: Քաղաքական գործունեությունը սկսել է՝ որպես ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի անդամ: 2012-2016թ. «Հայ ազգային կոնգրես» դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է ԱԺ պատգամավոր:*

*«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիրն է: 2017 թվականին ԱԺ խորհրդարանի ընտրություններին մասնակցելու նպատակով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կոալիցիոն պայմանագիր է կնքել «Հանրապետություն» եւ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների հետ՝ ստեղծելով «Ելք» դաշինքը, որի ընտրացուցակով ընտրվել է ԱԺ պատգամավոր:*

*Ամուսնացած է, ունի չորս երեխա:*

## ԿԱՅԱՑԱՎ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Մայիսի 8-ին, Ազգային ժողովի կողմից Հայաստանի վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի թեկնածության հաստատումից անմիջապես հետո, Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցավ երկրի նախագահ Արմեն Սարգսյանի եւ նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջին հանդիպումը:*



Շնորհավորելով Նիկոլ Փաշինյանին՝ երկրի նախագահն ասաց. «Ուզում եմ մաղթել, որպեսզի որքան հնարավոր է շուտ ձեւավորեք կառավարությունը եւ լծվեք այն բոլոր խնդիրների լուծմանը, որ մեր պետության, կառավարության, ողջ ժողովրդի եւ այս երկրի՝ Հայաստանի Հանրապետության առջեւ են: Ձեզ լավագույն մաղթանքներս եւ՝ հաջողություններ»:

Հիմք ընդունելով Ազգային ժողովի 2018թ. մայիսի 8-ի՝ Նիկոլ Փաշինյանին վարչապետ ընտրելու վերաբերյալ որոշումը՝ նախագահ Արմեն Սարգսյանը մայիսի 8-ին հրամանագիր է ստորագրել՝ Նիկոլ Փաշինյանին Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակելու մասին:

## ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

### «ԱՅՍ ԿԱԶՄՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏՆ ԷՐ»



*Մայիսի 11-ին, Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, անցկացվեց գործադիր իշխանության նիստ:*

Օրակարգային հարցերը սպառելուց հետո, վարչապետը շնորհակալություն հայտնեց ներկաներին եւ նշեց, որ այս կազմով գործադիրի վերջին նիստն է:

«Հարգելի գործընկերներ, կառավարությունն այսպիսի կազմով վերջին անգամ է հավաքվում: Ես բոլորիդ հաջողություն եմ մաղթում: Հաջողություն եմ մաղթում նաեւ նոր ձեւավորվող կառավարությանը»,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նշենք, որ Նիկոլ Փաշինյանը կառավարության կազմում որոշակի փոփոխություններ է ծրագրում: Մասնավորապես, նրա խոսքով Հայաստանի սփյուռքի նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Հրանուշ Հակոբյանը չի շարունակի պաշտոնավարումը: «Այս պահին մենք կառավարության կառուցվածքում փոփոխություններ անելու ծրագիր չունենք եւ չենք էլ հասցնի ֆիզիկապես, սակայն Սփյուռքի հետ հարաբերությունները շատ կարեւոր են: Ամեն ինչ անելու ենք, որ այդ նախարարությունը գործի ոչ միայն սփյուռքի ու հայապահպանության շրջանակում, այլեւ դա պետք է հայրենադարձությունը կազմակերպող եւ հայրենադարձությանն աջակցող հիմնական օղակը լինի»,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

## ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջադրմամբ եւ երկրի նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով Հայաստանի կառավարությունում առաջին նշանակումներն են իրականացվել:*

Առաջին փոխվարչապետ՝ **ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ**. 39 տարեկան, ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Աշխատել է տեղի եւ միջազգային Մեդիա հարթակներում: Քաղաքացիական պայմանագիր կուսակցության հիմնադիր անդամ է: Ամուսնացած է, ունի մեկ դուստր եւ մեկ որդի:

Փոխվարչապետ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**. 29 տարեկան, ավարտել է Ռուս Հայկական (Սլավոնական) համալսարանի Կիրառական Մաթեմատիկայի ֆակուլտետը, Լոնդոնի Քուին Մերի համալսարանի մագիստրատուրան: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ է: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

Պաշտպանության նախարար՝ **ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ**. 52 տարեկան, ծնվել է Ղազախստանի Ուստ-Կամենոգորսկ քաղաքում: Մինչ նոր նշանակումը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարն էր: Ամուսնացած է ունի դուստր եւ որդի:

Կրթության եւ գիտության նախարար՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**. 39 տարեկան, ավարտել է Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետը: Դասախոսում է ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խորհրդի անդամ է: Աշխատել է մի շարք միջազգային կառույցներում:

Հայաստանի Հանրապետության ոստիկանապետ՝ **ՎԱԼԵՐԻ ՕՍԻՊՅԱՆ**. 48 տարեկան, ՀՀ ոստիկանության գնդապետ, եղել է ոստիկանության գնդի հրամանատարի տեղակալ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

*Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր առաջին պաշտոնական այցը կատարեց Ստեփանակերտ, որտեղ նա, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի, պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների հետ Ստեփանակերտի հուշահամալիրում մասնակցեց Հայրենական պատերազմում, Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակի ոգեկոչման արարողությանը:*

Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում, Նիկոլ Փաշինյանը, կնոջ ուղեկցությամբ, ծաղիկներ խոնարհեց Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների շիրիմներին՝ իր զորակցությունը հայտնելով նաեւ զոհվածների հարազատներին: Երկու հանրապետությունների բարձրաստիճան պաշտոնյաները ծաղիկներ դրեցին Շուշիի Տանկ-հուշարձանին:

Այնուհետեւ, Նիկոլ Փաշինյանն ու Բակո Սահակյանն ուղեւորվեցին Շուշի, որտեղ հիշատակի արարողություն տեղի ունեցավ սպարապետ Վազգեն Սարգսյանի արձանի մոտ: Նիկոլ Փաշինյանը եւ Բակո Սահակյանը մասնակցեցին Շուշիում հայկական դրամի թանգարանի բացմանը:

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

*Նիկոլ Փաշինյանին, Հայաստանի վարչապետ ընտրվելու կապակցությամբ, շնորհավորական հեռագրեր են հղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը, Եվրոպական Միության միասնական արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին, պաշտոնական այլ անձինք:*

### ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

*Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Կարեն Կարապետյանը, մայիսի 8-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանին դիմում է ներկայացրել՝ առաջին փոխվարչապետի պաշտոնակատարի պարտականությունների կատարումը դադարեցնելու վերաբերյալ, որով պայմանավորված՝ խնդրել է նաեւ դադարեցված համարել վարչապետի պաշտոնակատարի պարտականությունների կատարումը:*

### ԵԱՏՄ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

*Հայաստանից, ընթացիկ տարվա առաջին եռամսյակում, արտահանումը ԵԱՏՄ ուղղությամբ կազմել է 154,2, ԵՄ երկրներ՝ 172,2, այլ երկրներ՝ 264,4 միլիոն դոլար: Դեպի Ռուսաստան Հայաստանից 2018-ի հունվար-մարտին արտահանվել է 149,3 միլիոն դոլարի ապրանք, Շվեյցարիա՝ 97,6, Բուլղարիա՝ 63, Գերմանիա՝ 37,3, Նիդերլանդներ՝ 28,5, Իրան՝ 24,8 միլիոն դոլարի արտադրանք:*

*ԵԱՏՄ ուղղությամբ արտահանման աճը կազմել է 47,6 տոկոս, ԵՄ-ի՝ 29,2 տոկոս, այլ երկրների՝ 30,7 տոկոս:*

*Հիշյալ բոլոր ուղղություններով արտահանման աճ է արձանագրվել: Ռուսաստան արտահանված ապրանքների ծավալն աճել է 45,7 տոկոսով, Շվեյցարիա՝ 72,8, Բուլղարիա՝ 12,1, Գերմանիա՝ 9,1, Նիդերլանդներ՝ 59,1, Իրան՝ 85,4 տոկոսով:*

*2018-ի առաջին եռամսյակում արտահանումը 34,4 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ կազմելով 597,3 մլն ԱՄՆ դոլար՝ աճել է 152,9 մլն ԱՄՆ դոլարով:*

### ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

*Համաջայն Հայաստանի սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (ՍԷԿՏ) ստացված տվյալների՝ 2018թ. հունվար-մարտին, Հայաստան ընդհանուր այցելությունների թիվը, ըստ քաղաքացիության, կազմել է 683759, աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 14,0%, որից զբոսաշրջային այցելությունները կազմել են 346458, աճը կազմել է 16,1%: 2017թ. հունվար-մարտին, Հայաստան ընդհանուր այցելությունների թիվը, ըստ քաղաքացիության, կազմել է 599341, աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 18,2%, որից զբոսաշրջային այցելությունները կազմել են 298 533, աճը կազմել է 18,2%:*

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՅԻՍ

*13.05.2018. Երկրորդ Ծաղկազարդ*



Քրիստոսի Համբարձման տոնին հաջորդող կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկազարդը: Տոնի անվանումն առաջացել է Զատիկի՝ Սուրբ Հարության նախորդող Ծաղկազարդի տոնի անվանումից:

Երկրորդ Ծաղկազարդը՝ արդեն համբարձյալ Քրիստոսի Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները: Երկրորդ Ծաղկազարդը քրիստոնյաներին վերստին հիշեցնում է Քրիստոսի Համբարձումը եւ՝ մահվանից հետո երկնքում, Աստծո ներկայությամբ երանություն վայելելու հույս պարգեւում:

ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

## ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿ ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

*Մայիսի 7-ին, Թբիլիսիում, Ծանրամարտի միջազգային ֆեդերացիան անցկացրեց միջոցառում՝ նվիրված 2017 թվականի լավագույն մարզիկների պարգեւատրմանը:*




Այդ մարզաձեւի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար, 24-ամյա վրաց ծանրամարտիկ, համաշխարհային ռեկորդների հեղինակ, օլիմպիական խաղերի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Լաշա Տալախաձեն, ինչպես նաեւ օլիմպիական չեմպիոն, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն իսպանուհի Լիդիա Վալենտինին, պարգեւատրվեցին աշխարհի լավագույն ծանրամարտիկի կոչումով:

Շնորհալի մարզիկներին պարգեւները հանձնեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նա շնորհավորեց աշխարհի լավագույն ծանրամարտիկներին, շնորհակալություն հայտնեց Ծանրամարտի միջազգային ֆեդերացիային՝ պարգեւատրման արարողությունը Թբիլիսիում անցկացնելու համար:

Աշխարհի լավագույն ծանրամատիկներին շնորհավորեցին նաեւ վրաստանցի օլիմպիական չեմպիոններ Ռաֆայել Չմշկյանը, Կախի Կախիաշվիլին, Գիորգի Ասանիձեն:

ԴՊՐՈՑ

## ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ԸՆԿԱԼՈՒՄ ԿԱՐԴԱՑԱԾԸ



*Վրաստանի հանրային դպրոցների աշակերտների 14 տոկոսը, թեկուզ նվազագույն մակարդակով, չի ընկալում կարդացածը:*

Այդ մասին է վկայում Վրաստանում արդեն երրորդ անգամ PIRLS (Progress in Innternational Reading Literacy Study) կողմից իրականացված ուսումնասիրությունը: Վերջին հարցումը ցույց տվեց, որ հանրային դպրոցների 9-10-րդ դասարանի աշակերտների մի որոշակի մասը չի ընկալում կարդացածը: «Կարդացած տեքստը ընկալելու, այսինքն՝ այն հասկանալու եւ վերլուծելու ունակությունը վավերացվել է Վրաստանի հանրային դպրոցների աշակերտների 2 տոկոսի մոտ»,- ասված է հաշվետվության մեջ:

Մայիսի 5-ին՝ Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնում անցկացված PIRLS հաշվետվության շնորհանդեսին, առանձնակի շեշտ դրվեց աշակերտների գրագիտության ցածր մակարդակի վրա: Նշենք, որ ուսումնասիրություններ անցկացվել է երկրի 200 դպրոցում, ներգրավվել են 6 հազար աշակերտներ, ծնողներ, ուսուցիչներ եւ դպրոցների տնօրեններ:

Ինչպես հայտարարվեց շնորհանդեսին՝ կարդացածի ընկալումը եւ դրա վերլուծությունը, ըստ PIRLS-ի ուսումնասիրության, կարողացել են իրականացնել հարցման ենթարկվածների 2 տոկոսը: Գրականությունը՝ որպես տեղեկատվական տեքստի ընթերցում՝ կարողացել է իրականացնել հարցման ենթարկված աշակերտների 22 տոկոսը: Այդ հարցում միջին եւ ցածր ունակություններ են դրսեւորել աշակերտների, համապատասխանաբար, 36 եւ 26 տոկոսը: Ինչ վերաբերում է 14 տոկոսին, ապա, դրանց գիտելիքների մակարդակն աղետալի վիճակում է:

Ինչպես նշեց գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, վերոնշյալ ուսումնասիրությունը լուրջ քննարկման կարիք ունի: Նրա հավաստմամբ, հարկ է լուրջ մոտեցում ցուցաբերել հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ: Մայա Միմինոշվիլին գտնում է, որ հիմնախնդրի կարգավորման լավագույն ուղիներից մեկը՝ ընթերցանության դասերի ներդրումն է:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## ՀԻՆԳ ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒՄ



*Ապրիլի 29-ից մայիսի 3-ը, Ռուսթավիում, անցկացվեց բռնցքամարտի Վրաստանի առաջնությունը, որին մասնակցեց Ախալքալաքիի սպորտհամալիրի 8 մարզիկ: Վրաստանի վաստակավոր մարզիչ Ատոմ Էլիզբարյանի սաները այդ մրցաշարում նվաճել են 7 մրցանակային տեղ, եւ 5-ը բռնցքամարտիկ ընդգրկվել են երկրի ազգային հավաքական:*

Տարիների ընթացքում Վրաստանի հավաքականի կազմում հանդես են եկել ախալքալաքցի 15 բռնցքամարտիկներ:

Ռուսթավիում անցկացված մրցաշարի արդյունքներով, 56 կգ քաշային կարգում, հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեց Արտյուշ Գոմցյանը: Արծաթե մեդալների արժանացան Ստեփան Շիրինյանը (52 կգ), Արմեն Գրիգորյանը (60 կգ), Արշակ Էլիզբարյանը (69 կգ), Արտյոմ Յորդանյանը (91 կգ), Գագիկ Պողոյանը (56 կգ): Մրցանակային պատվանդանի երրորդ հորիզոնականը զբաղեցրեց Նաիրի Մելիքյանը (69 կգ):

Ավելացնենք, որ 2017 թվականի աշխարհի գավաթի բրոնզե մեդալակիր Օթար Երանոսյանը, ծնկի վնասվածքի պատճառով այդ առաջնությանը չմասնակցեց:

Մայիսի 13-ից Վրաստանի ազգային հավաքականի մարզիկները Թբիլիսիում եւ Բակուրիանիում կպատրաստվեն առաջիկա պատասխանատու միջազգային մրցաշարերին մասնակցելու համար:

## ԽԱՉԲԱՌ

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | | 2 | | 3 | | | 4 | | 5 | | 6 |
| 7 | | | | | | 8 | | 9 | | | | |
| | | | | | 10 | | | | | | | |
| 11 | | 12 | | | | | | 13 | 14 | | 15 | |
| | 16 | | | | 17 | | | | | | | |
| | | | | 18 | | | | 19 | | 20 | | 21 |
| 22 | | | 23 | | | | 24 | | | | | |
| | | | 25 | | 26 | | | | | | | |
| 27 | 28 | | | | | | 29 | | 30 | | 31 | |
| | | | | | 32 | | | | | | | |
| 33 | | 34 | | | | | | | 35 | | | 36 |
| | 37 | | | | | 38 | | 39 | | | | |
| | | | | 40 | 41 | | 42 | | | 43 | | |
| 44 | 45 | | 46 | | 47 | | | | 48 | | | |
| | 49 | | | | | | 50 | | | 51 | | 52 |
| 53 | | | | | 54 | | | | 55 | | 56 | |
| | | | 57 | | | | 58 | | | | | |

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Շուտահաս: 9.Միավորների կիսում սպորտում: 10.Կտրված ծառի մնացորդ: 11.Լոլիկ: 13.Քաղաք Վրաստանում: 16.Քաղաք Իսպանիայում: 17.Բարձրագույն ուսումնական հաստատություն: 19.Ֆրանսիացի գրող ... Ռոլան: 22.Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Նիկոլ ...: 24.Ֆիլմը՝ անգլերեն: 25.Քաղաք Եմենում: 27.Քաղաք Ուգանդայում: 29.Իտալացի դերասանուհի, մոդել ... Բելուչի: 32.Վալախիայի իշխան Վլադ Ցեպեշ (Ռումինիա): 33.Ռուսական «հաղթական» ավտոմեքենա: 35.Զինանշան: 37.Սեգ, սիգապանծ: 39.Հրազդան գետը՝ հնում: 40.Անառիկ: 43.Կավե մեծ պնակ: 44.Պետություն Աֆրիկայում: 47.Արեգակ: 49.Արքունի ատյան: 50.«Օդային» նախածանց: 53.Ծնոտ (ժող.): 54. Հանրապետություն՝ բաղկացած 50 նահանգներից: 55.Դաբաղող նյութ, որ պարունակում է որոշ բույսեր: 57.Ֆրանսիայի մարշալ, Նապոլեոն I Բոնապարտի զինակիցներից Միշել ...: 58.Եղեգնուտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Նոյի թոռներից: 2.Քիմիական տարր: 3.Հայկական տպագրության սկզբնավորող եւ հիմնադիր ... Մեղապարտ: 4.Փոթորիկ: 5.Կոկորդի արտադրություն: 6.Ուսյալ, կրթված: 8.Հոսող: 12.Փաղեժ, տարանտուլ: 14.Ցրված բեկորների կույտ: 15.Դրախտ: 18.Դիտմամբ: 19.Մարզական արտադրանքի ֆիրմա: 20.Նահանգ ԱՄՆ-ում: 21.Քարթլիի թագուհի (մոտ 285-335 թթ.): 23.Հայ բանաստեղծ ... Սենալ: 26.Իտալացի երգահան Ջուզեպպե Վերդիի օպերա՝ չորս գործողությամբ: 28.Ուշի-...: 29.Այյուրը զտելու հարմարանք: 30.Փափուկ կոնֆետ: 31.Ըստ հերթականության: 34.Գերմանիայի մայրաքաղաքը: 36.Կենդանու ազդր, զիստ: 38.Բարձունք, լեռ: 41.Ազգ ՌԴ-ում: 42.Պարտված մարզիկի կողմից նույն մարզիկին հաղթելը: 45.Անվանակից: 46.Ռուսաստանի «Աիեղ» ցարը: 48.Թաիլանդի հին անունը: 51.Կեղտ, զիբիլ: 52.Սապատավոր կենդանի: 56.Բացականչություն:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Վրուբել: 5.Մանարյան: 10.Սուրամ: 11.Տիաս: 12.Ռիմա: 13.Նար: 14.Ցին: 16.Արինա: 17.Նայրոբի: 18.Եգան: 19.Թե: 20.Ջինա: 23.Սեդա: 24.Թունել: 26.Խսիր: 28.Լիսաբոն: 29.Աճիկ: 31.Նատո: 33.Նանե: 34.Նինվե: 37.Սուտ: 39.Ալեկոծվել: 42.Դարչին: 46.Նանի: 48.Մուրադ: 50.Նենե: 51.Յանա: 52.Աբուլ: 53.Դարչո:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վարդերեսյան: 2.Ուստիան: 3.Եսայի: 4.Լուսինե: 5.Մառ: 6.Անի: 7.Ադամյան: 8.Յանգոն: 9.Ներսիկ: 15.Նագպուր: 17.Ննջել: 19.Թախծոտ: 21.Իլիա: 22.Արայի: 24.Թիկնել: 25.Անժել: 27.Սի: 29.Ատ: 30.Անակ: 32.Առու: 35.Նալչիկ: 36.Աճան: 37.Սուդան: 38.Տարոնի: 40.Եկ: 41.Հյուգո: 43.Իմ: 44.Նուրբ: 45.Սայլ: 47.Ասադ: 49.Դա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445